



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1

☎/0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019թ.

Tert.am կայքի լրագրող

Անի Օհանյանին

Փոստ՝ aniarami90@gmail.com

Հարգելի Ա. Օհանյան

Ի պատասխան Ձեր հարցման հայտնում եմ, որ.

1) 2019 թվականի փետրվարի 23-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կայացած <<Իմ քայլը հանուն Լոռու մարզի>> ներդրումային բիզնես-համաժողովին մասնակցել է շուրջ 350 մարդ:

2) Համաժողովին ներկայացվել են շուրջ 50 ծրագրեր, այդ թվում՝ զբոսաշրջության ոլորտ-22, վերամշակող և արդյունաբերական ոլորտ-13, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ-3, գյուղատնտեսական ոլորտ-12:

Այս տարի «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ կողմից կառուցված կոմպոզիտային գազաբալոնների գործարանում կատարվել է շուրջ 3 մլրդ. 100 մլն. դրամի ներդրում: Հարթագյուղ համայնքում՝ «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ, շարունակվում են իրականացվել ծրագրեր, մասնավորապես՝ կառուցվել է հյուրատուն, ինչպես նաև ընթացքի մեջ են համայնքում ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքները՝ պետական աջակցության սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Արդվի համայնքում «Արդվի վիլիջ ռեզորտ» ծրագրի իրականացումն ընթացքի մեջ է, այժմ ընթանում է հողահատկացման գործընթացը: Տուրիստական գոտու համար անհրաժեշտ հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու հողաշինարարական գործը ներկայացվել է <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման

միջգերատեսչական հանձնաժողովի»>> քննարկմանը: Կազմվել է ՀՀ կառավարության կողմից ընդունված «Նյու Իդա» ընկերության ներդրումային ծրագրին հավանություն տալու և ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը: «Նյու Իդա» ընկերության կողմից կառուցվող գործարանի համար նախատեսված հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխվել է: Ընթացքի մեջ է հողամասերը ընկերությանը տրամադրելու գործընթացը:

ԵՄ ֆինանսավորմամբ և «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի աջակցությամբ կառուցվում է «Ճամփեգրյա կայան» տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կենտրոն՝ 2019թ.-ի առաջին կիսամյակի դրությամբ 70 մլն դրամ ներդրմամբ: Ալավերդի համայնքում ընթացքի մեջ է քարանձավային տուրիզմի կենտրոնի կառուցումը, արդեն իսկ ներդրվել է 48 մլն. դրամ: «Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության» կենտրոնը իրականացրել է «ԷկոՏուն Լոռի»՝ պլաստմասե թափոնների վերամշակում, «Pottery House Armenia»՝ կավաբուծության կենտրոն, «Debet Workation Hotel»՝ հանգստի և աշխատանքի համար նախատեսված հյուրատուն, ծրագրերը:

Մարզպետարանի միջնորդությամբ կայացած բանակցությունների արդյունքում լուծվել է Ձորագետ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող պահեստի տարածքը մատչելի պայմաններով ներդրողին տրամադրելու հարցը, որը կնպաստի մոտ 120 նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև Սպիտակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ներդրողին տրամադրելու հարցը՝ թռչնաբուծարան կառուցելու նպատակով :

3) Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանի գլխավորած պատվիրակությունը 2019 թվականի ապրիլի 22-26-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում (Պեկին և Շանսի նահանգներում)՝ «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» խորագրով նախաձեռնությունների 2-րդ վեհաժողովին ներկայացրել է մարզի ներուժը, գործարարներին է ներկայացվել փետրվարին կայացած համաժողովի ընթացքում առավել հետաքրքրություն առաջացրած ծրագրերից մի քանիսի շնորհանդեսը:

24 ներդրումային ծրագրի համար ՀՀ Ամերիաբանկ» ՓԲԸ-ն իրականացրել է մասնագիտական փորձաքննություն՝ ռիսկայնության աստիճանը որոշելու նպատակով, որոնք տեղադրվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակում: Անձամբ հեղինակների կողմից 12 ծրագիր՝ շնորհանդեսային տարբերակով, ներկայացվել է

Եվրամիության դեսպանատը՝ ՀՀ 3 մարզերում զբոսաշրջության ոլորտի ծրագրերի ֆինանսաֆորման շրջանակներում (շուրջ 13 մլն. եվրո) ընդգրկելու համար: Համաժողովին ներկայացված ծրագրերը ուղարկվել են նաև «Ramsis Capital» ընկերությանը, որը ցանկանում է ներդրումներ կատարել Հայաստանում: Այդ ընկերությունը առավելապես հետաքրքրված է գյուղատնտեսական, SS և էներգետիկ ոլորտներով: Վերը նշված ներդրումային ծրագրերը ուղարկվել են նաև Առևտրա-արդյունաբերական պալատ և Գործատուների միություն:

 Invalid signature

X 

ԱՅՐԱՆԻՐԱՆՆ

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ